Տիգրան Ավետիսյան[1]

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՊԱՏՄԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Իրավունքի գերակայության սկզբունքի էվոլյուցիայի ուսումնասիրությունը ենթադրում է վերջինիս գենեզիսի (ծագման և ընթացքի) հետազոտումը պատմական զարգացման փուլերում, ինչը կօգնի ըստ էության և լիարժեք հասկանալ դրա սոցիալ-պատմական առաքելությունը, իրավունքի հասկացական համակարգում դրա տեղը և դերը, այլ իրավական երևույթների փոխհարաբերություններում իրականացրած գործառույթների պատմական անհրաժեշտությունը:

Իրավական մտքի պատմության ուսումնասիրությունը վերհանում է պատմական փաստաթղթերի հիմնական գծերը (միտումներ) և բեկումնային պահերը, որոնք հետագայում հիմք են հանդիսացել **«իրավունքի գերակայություն-իրավական պետություն»** ներկայիս հայեցակարգի ձևավորման և մշակման համար:

Կատարյալ պետության (երկրի) և օրենքների (սոցիոնորմատիվ համակարգի) դիսկուրսները գրեթե բոլոր հետազոտողների աշխատություններում դիտարկվում են զուգահեռաբար՝ որպես ինքնին հասկանալի. այսպես՝ Արիստոտելի «Պոլիթիա»-յից միչև Օգոստինոս Երանելու «Աստծո քաղաքը», Ավետյաց երկրի որոնումներից մինչև Թոմազո Կամպանելլայի «Արևի քաղաք» ու Թոմաս Մորի «Ուտոպիա» կատարյալի ընկալումը չի տարանջատում կառուցակարգային և գործառութային տարրերը. իրավական պետության և իրավունքի գերակայության հայեցակարգերի «արյունակցական» կապը, միգուցե, այսպիսի մեթոդաբանական արմատներ ունի:

Սույն աշխատության շրջանակներում **«իրավունքի գերակայություն-իրավական պետություն»** հասկացությունները դիտարկվելու են որպես նույնական (ըստ համատեքստի և ենթատեքստի), անխզելիորեն փոխկապված հասկացություններ՝ որպես ձևի և բովանդակության, պատճառի և հետևանքի, էության և երևույթի հարափոփոխ հարաբերակցություններ:

---

[1] ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտ. ղեկավար՝ ի. գ. դ. պրոֆ. Գ. Գ. Հարությունյան:

Սույն հոդվածի շրջանակներում «իրավունքի գերակայություն» հայեցակարգի (հասկացությունը և բաղադրատարրերը) սահմանման համար հիմք է Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) մի խումբ անդամների (համահեղինակներ՝ Պիտեր վան Դեյք (Նիդերլանդներ), Գրետ Հալլեր (Գերմանիա), Ջեֆրի Ջոուել (Մեծ Բրիտանիա), Կաարլո Տուորի (Ֆինլանդիա)) կողմից մշակված «Իրավունքի գերակայության վերաբերյալ» զեկույցը (հետազոտություն N 512/2009), որն ընդունվել է 2011 թվականի մարտի 25-26-ին Վենետիկում կայացած 86-րդ լիագումար նիստում[2]:

Զեկույցում ամփոփվել են իրավունքի գերակայության սկզբունքի պատմական զարգացման ընթացքը, ժամանակակից ընկալումների դոկտրինալ աղբյուրները, հիմնատարրերն ու բնութագրիչները, եզրաբանական յուրահատկությունը, արժեբանական ու գործնական (իրավակիրառելիության) չափորոշիչները[3]:

---

[2] Տեքստը (CDL-AD(2011)003rev) տե՛ս http://concourt.am/armenian/news/doc/CDL-AD(2011)003rev-e.pdf կայքում 07.09.2014 թ. դրությամբ: Զեկույցում արտահայտված մոտեցումները հիմնականում ընդունելի են և ելակետային նաև սույն աշխատանքի շրջանակներում: Զեկույցի հիմնադրույթները մեթոդաբանական նշանակություն ունեն իրավունքի գերակայության սկզբունքի պատմական զարգացումը (էվոլյուցիան) պատմահամեմատական մեթոդով դիտարկելիս:

[3] Իրավունքի գերակայության ժամանակակից հայեցակարգի հիմքերը մշակել է Ա. Դայսին իր 1885 թ. հրապարակած «Սահմանադրական իրավունքի հետազոտման ներածություն» հիմնարար աշխատությունում: Տե՛ս ռուսերեն հրատարակությունը A. B. Дайси. Основы государственного права Англии (Introduction to the study of the law of the constitution). Пер. О. В. Полтороцкой, под ред. П. Г. Виноградова. Изд. Л. Ф. Пантелеева. С.-Петербург, 1891):

Հետագայում, իհարկե, Ա. Դայսիի մշակած «Իրավունքի գերակայության» տեսությունը (Rul e of Law) ենթարկվել է տարբեր փոփոխությունների և վերամշակումների, այդ թվում՝ մայրցամաքային իրավական համակարգում ընդունված «իրավական պետության» հայեցակարգի ազդեցությամբ. այս հարադրությունը (զուգահեռներ) գիտական աշխատություններում և գործնական ուղեցույցներում գրեթե մշտապես տարվել է՝ վերհանելով այդ թարգմանական-եզրաբանական ընկալումների առանձնահատկությունները: Սույն աշխատանքի շրջանակներում, ինչպես նշվել է, դրանք դիտարկվելու են որպես նույնական (ըստ համատեքստի և ենթատեքստի) հասկացություններ, մինչդեռ Զեկույցում հետազոտության հեղինակները, հակադրելով միջազգային լեզուներում (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն) առկա թարգմանություն-ձևակերպումները, այնուամենայնիվ, դրանք դիտարկում են որպես ոչ նույնական հասկացություններ. Ըստ իրենց՝ «իրավունքի գերակայությունը» ոչ միշտ է համընկնում գերմաներեն «Rechtsstaat», ֆրանսերեն «Etat-de Droit» կամ «Prééminence du droit»,

1. Գիտական մտքի ձևակերպման ժամանակաշրջանում Հին Հունաստանում Պլատոնն էր առաջին անգամ բանաձևել իրավունքի գերակայության սկզբունք-հայեցակարգի հիմունքները[4]: Առաջացման պահին, սակայն, իրավունքի (Պլատոնի ձևակերպմամբ՝ օրենքի) գերակայություն գաղափարը դիտարկվում էր գլխավորապես ձևական հատկանիշների (տարրերի) գերակշռմամբ («*…Օրենքը տիրակալն է կառավարիչների…»):*

Հետագա դարաշրջաններում իրավունքի գերակայության գաղափարը կրել է բովանդակային փոփոխություններ. հագեցել կողմնորոշիչ (արժեքաբանական) նյութով: Ըստ որում՝ իրավունքի գերակայության հայեցակարգի զարգացման ընթացքում էական նշանակություն են ունեցել և զգալի ազդեցություն են թողել պատմական դեպքերը, խոշորագույն մտածողների գաղափարները, փիլիսոփայական դպրոցները, որոնք հաճախ կանխորոշել են այդ հայեցակարգի տարրերի կառուցվածքը, ընդգծել փոփոխության հանգամանքն ու անհրաժեշտությունը, սահմանել շրջանակը, ուղղորդել վեկտորները, որոշել սահմանները:

Քրիստոնեության ընդունումը՝ որպես քաղաքակրթական ընտրություն, հիմնովին ձևափոխել է մարդու դերն ու գոյության ընկալումը, հետևաբար՝ իրավունքի հայեցակարգը պետք է արտացոլեր և իր հերթին փոխազդեր նորահայտ իրողություններին՝ էապես փոխելով սոցիալական (հումանիտար) մշակույթի, մասնավորապես՝ իրա-

---

ռուսերեն «верховенство закона» հասկացություններին: Տվյալ հասկացությունների ընկալման և թարգմանական առանձնահատկությունների մասին առավել մանրամասն տե՛ս Hiroshi Oda, «The Emergence of Pravovoe Gosudarstvo (Rechtsstaat) in Russia» 25 Review of Central and East European Law 1999 No 3, 373., M. Loughlin, Foundations of Public Law,(2010), B. Tamanaha, On the Rule of Law: History, Politics and Theory (2004). (մեջբերումը՝ ըստ Զեկույցի):

[4] Ք.ա. 5-րդ դարում իր «Օրենքները» աշխատության «Կատարյալ օրենսդրության նախնական ուրվագիծ» հատվածում Պլատոնն այսպես է ձևակերպում իր տեսլականը. «*Ես տեսնում եմ մոտալուտ մահն այն պետության, որում օրենքն ուժ չունի և որևէ մեկի իշխանության ներքո է: Իսկ այնտեղ, ուր օրենքը տիրակալն է կառավարիչների, իսկ նրանք՝ օրենքի ստրուկները, ես տեսնում եմ պետության փրկությունը և այն բոլոր բարիքները, որ կարող են պետություններին ընծայել աստվածները*»: Տե՛ս Платон. Сочинения в трех томах. Т. 3. Ч. 2. /Под общ. ред. А. Ф. Лосева и В. Ф. Асмуса // Пер. с древнегреч. «Мысль», М., 1972., 188, 189 էջեր:

վունքի ճարտարապետության (արխիտեկտոնիկա) հոգևոր-արժեքային բաղադրիչները[5]:

Միջնադարյան պատմական փաստաթղթերը լավագույնս են դրսևորում իրավունքի գերակայության սկզբունքի ընկալման և դրա արտահայտման (ամրագրման) ծավալային, ապա նորմատիվության աստիճանի փոփոխությունը՝ հայեցակարգի ազդեցության հետզհետե ընդլայնվող միտումով: Հիմնարար (սահմանադրական) նշանակություն են ունեցել (ունեն) փիլիսոփայական (այդ թվում և հատկապես՝ իրավունքի փիլիսոփայության) մտքի զարգացման փուլերում առանձին երկրներում ընդունված (հռչակված) մի շարք ակտերպատմական փաստաթղթեր, որոնք չեն կորցրել իրենց արդիական նշանակությունը՝ կանխորոշելով նաև թե՛ տվյալ երկրի մշակույթի, թե՛ արդի իրավական մտքի զարգացումն ընդհանրապես[6]:

Այսպես՝ Անգլիայում 1215 թվականին Ազատությունների մեծ խարտիայի (Magna Carta Libertatum) ընդունմամբ սահմանափակվում էր միապետի իշխանությունը, և սահմանվում են մարդու անձնական իրավունքների որոշ երաշխիքներ, դրույթներ արդարադատության իրականացման վերաբերյալ[7]: 1679 թ. Habeas Corpus Act-ը զգալիորեն ընդլայնում էր իրավունքի գործողության շրջանակը՝ ամրագրելով դատարանների հատուկ դերը, բարձրացնելով արդարադատության մատչելիության աստիճանը, սահմանափակելով կամայականութ-

---

[5] Տե՛ս **Папаян Р. А.,** Христианские корни современного права. М.: Издательство НОРМА, 2002; История политических и правовых учений.Учебник для вузов. Под общей редакцией члена-корреспондента РАН В. С. Нерсесянца. М., ИНФРА-М., 1996, էջ 102-117:

[6] Այս խորապատկերում արժանահիշատակ են Անտիկ մշակույթի դրսևորումները, աստվածաբանական գիտական մտքի ավանդույթները միջնադարյան կրոնական աշխատություններում, Վերածննդի շրջանի և Ռեֆորմացիայի իրավագիտական հիմնարար ուղեցույցները, նոր ժամանակաշրջանի գիտական հայեցակարգերը (Հ. Հրոցիոս, Ջոն Միլ, Թ. Հոբս, Ջոն Լոք, Վոլտեր, Շ-Լ. Մոնտեսքյո, Ժ.-Ժ. Լուսո, Ի. Կանտ, Գ. Հեգել, Թ. Ջեֆերսոն և այլն):

[7] Տեքստը տե՛ս http://en.wikisource.org/wiki/Source_Problems_in_English_History/ppendix/Magna_Carta._1215 (անգլ. 07.04.2014 թ. դրությամբ), http://ru.wikisource.org/wiki/Великая_хартия_вольностей (ռուս. թարգմանությունը՝ Դ. Մ. Պետրուշևսկու, 07.04.2014 թ. դրությամբ), http://ru.wikisource.org/wiki/la:Magna_Carta (լատ. 07.04.2014 թ. դրությամբ) կայքերում:

յունների իրավական հնարավորությունները[8]: Իսկ 1689 թ. Իրավունքների մասին Բիլլը ամրագրում էր ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի դերի ամրապնդման և բարձրացման (պառլամենտարիզմի հիմունքներ), կամայականության արգելքի և խտրականության բացառման (իրավահավասարության սկզբնատարրեր) սկզբունքների տարբեր դրսևորումների վերաբերյալ հիմնադրույթներ[9]:

Համանման իրավական-քաղաքական գործընթացներ տեղի են ունեցել նաև Ռուսաստանում. որպես 16-րդ դարակեսին իրականացված Մեծ բարեփոխումների կառուցակարգային դրսևորում՝ հիշատակման է արժանի Համերկրային ժողովը (Земский собор), իսկ հայեցակարգային առումով՝ Դատաստանագիրքը, որի 98-րդ հոդվածը սահմանափակում էր ցարի՝ գերագույն իշխանության իրականացման սահմանները[10]:

Թ. Հոբսի, Ջ. Լոկի, Ժ.-Ժ. Ռուսոյի, Շ. Մոնտեսքյոյի, Թ. Փեյնի գաղափարները հետևողականորեն նյութականանում էին՝ աստիճանաբար ներառելով հանրային կյանքի կարգավորման կառուցվածքային և գործառութային շերտերը. ԱՄՆ-ում և Եվրոպայում ընդունվող սահմանադրություններն ու համանման հիմնարար փաստաթղթերը (իրավակարգավորման գործընթացները) կյանքի էին կոչում Պլատոնի գաղափարների աշխարհը՝ օրենքով կառավարվող պետությունը:

Հետագա պատմական-սահմանադրական փաստաթղթերը առավել ամբողջացնում են նշված գաղափարները՝ ընդգրկելով և ընդարձակելով մարդու իրավունքների ինստիտուտը:

1789 թ. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում ամրագրված իրավադրույթները պաշտոնապես հռչակված՝ առաջին ամբողջական ուղղակի արտացոլումն էին պատմական փորձի, սահ-

---

[8] Տեքստը տե՛ս http://press-pubs.uchicago.edu/founders/documents/a1_9_2s2.html (անգլ., 07.04.2014թ. դրությամբ) և http://www.memo.ru/prawo/hist/habeas.htm (ռուս. 07.04.2014 թ. դրությամբ) կայքերում:

[9] Տեքստը տե՛ս http://avalon.law.yale.edu/17th_century/england.asp (անգլ. 07.04.2014 թ. դրությամբ) և http://legislator.narod.ru/txt/new/bill1689-1_main.html (ռուս. 07.04.2014 թ. դրությամբ) կայքերում:

[10] 1550 թվականի դատաստանագրքի տեքստը տե՛ս http://krotov.info/acts/16/2/pravo_02.htm կայքում (07.04.2014 թ. դրությամբ): Ռուս իրականության մեջ սոցիալ-իրավական մշակույթի զարգացման փուլերի ուշագրավ դիտարկումներ է կատարել պատմաբան Ալեքսանդր Յանովը, որի էսսեն տե՛ս http://www.snob.ru/profile/11778/blog/73342 (ռուս. 10.09.2014թ. դրությամբ) կայքում:

մանադրական մշակույթի և իրավունքի փիլիսոփայության, որոնք (իրավադրույթները), պարունակելով հիմնարար, սկզբունքային, արժեբանական կողմնորոշիչներ, նախանշում էին իրավունքի գերակայության սկզբունքի չափումները, ծավալը, դրսևորման վեկտորները: Կարծում ենք՝ իրավունքի գերակայության սկզբունքի ամբողջական և հայեցակարգային ընկալման տեսակետից բացառիկ (քվինտէսենցիալ) նշանակություն ուներ (ունի) Հռչակագրի 16-րդ հոդվածը (իրավունքի գերակայության սկզբունքի գոյաբանություն). ***«Հասարակությունը, որում Իրավունքների երաշխավորումն ապահովված չէ, իսկ Իշխանությունների տարանջատումը՝ որոշարկված, չունի Սահմանադրություն»***[11]:

Համանման հիմնարար նշանակություն ունի նույն դարաշրջանի մեկ այլ իրավական հուշարձան (գործող նորմատիվ ակտ)՝ 1776 թ. ԱՄՆ անկախության հռչակագիրը, որի նախաբանում ամրագրված դրույթները բացահայտում են իրավունքի գերակայության սկզբունքի (նաև ընդհանրապես՝ իրավական կանոնակարգման) և արժեքաբանական և թելեոլոգիական ներուժն ու որակները (**իրավունքի գերակայության սկզբունքի իմացաբանություն**).» ***Մենք նկատի ենք առնում այն ակներև ճշմարտությունը, որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար, և նրանց Արարիչը օժտել է որոշակի անօտարելի իրավունքներով, որոնք են՝ կյանքը, ազատությունը և երջանկության ձգտումը»***[12]:

18-րդ դարավերջից սկսած սահմանադրական իրողությունների (սահմանադրությունների ընդունում (ընծայում), սահմանադրական նոր տեքստերի (հռչակագրեր, մանիֆեստներ և այլն) ստեղծում, առկա տեքստերի փոփոխություն (բովանդակության և ծավալի ընդլայնում), սահմանադրական ընթացակարգերի և կառուցակարգերի ստեղծում (սահմանադրության ինստիտուցիոնալացում), արժեքների սահմանադրական ձևակերպում և ամրագրում (սահմանադրականացում)) բուռն զարգացման պատմությունը ըստ էության իրավունքի՝ հասարակական կյանքում իրացման (առարկայացման) և դրա-

---

[11] Տեքստը տե՛ս http://www.senat.fr/reglement/reglement117.html (ֆր., 07.04.2014 թ. դրությամբ) պաշտոնական կայքում:

[12] Տեքստը տե՛ս http://www.archives.gov/exhibits/charters/charters.html (անգլ., 07.04.2014 թ. դրությամբ) և http://www.hist.msu.ru/ER/Etext/indpndnc.htm (ռուս., 07.04.2014 թ. դրությամբ) կայքերում:

նով իսկ՝ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման (գործընթացի) պատմությունն է[13]:

Իրավական կարգավորման հայեցակարգի (իրավունքի փիլիսոփայության) գոյաբանական բաղադրիչը (արժեբանական և տեքստաբանական տարրերով) 20-րդ դարում ձեռք է բերում իրացման հսկայական ներուժ՝ համընդհանուր ընկալման և արտահայտման հնարավորությունը դրսևորելով միջազգային իրավական հարթությունում (գործընթացներ, իրավական փաստաթղթեր, կառույցներ): Այդպիսի զարգացումը ամփոփում և արտացոլում էր թե՛ իրավունքի գերակայության (իրավական պետության) հայեցակարգերի ժամանակակից վիճակը, թե՛ սոցիոնորմատիվ մշակույթի փորձն ու նվաճումները, թե՛ պատմական ժամանակահատվածի հրամայականները, ինչպես նաև պայմանավորված էր միջազգային ոլորտում պետությունների գործակցության և կառույցների կայացվածության աստիճանով և դոկտրինալ ու գործնական մոտեցումները նորմատիվ տեքստում ձևակերպելու (իրավական կարգավորման կառուցակարգում ներդնելու) անհրաժեշտությամբ[14]:

Իրավամբ, համամարդկային նշանակություն ունեն 1945 թ. Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը[15], 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը[16], 1966 թ. Քա-

---

[13] Սույն հոդվածի շրջանակներում նպատակահարմար չէ անդրադարձը ըստ էության սահմանադրական իրավունքի զարգացմանը (սահմանադրական զարգացման փուլերին), քանի որ տվյալ պարագայում խնդրո առարկան (իրավունքի գերակայության սկզբունքի հատկանիշների և էության վերհանում և էվոլյուցիայի բացահայտում) սահմանադրական զարգացման համատեքստում կարևորվում է միայն այդ տեսանկյունից:

[14] Այսպես՝ նախևառաջ միջազգային իրավական ակտերը ամրագրում են մեթոդաբանական նշանակության դրույթներ, որոնք արժեքային և նորմատիվ կողմնորոշիչներ են պարունակում իրավունքի գերակայության հասկացության, իրավունքի գերակայության սկզբունքի հիմնադրույթների ձևակերպումներով. տեքստային առումով դրանք արտահայտվում են նախաբաններում կամ սկզբնական հոդվածներում, որոնք առնչվում են տվյալ հիմնարար ակտերի նպատակներին, սկզբունքներին, արժեքներին:

[15] Տեքստը տե՛ս http://www.un.am/res/UN%20Treaties/Charter_arm_unicode.pdf (հայ.), http://www.un.org/en/documents/charter/ (անգլ.) կայքերում (07.04.2014 թ. դրությամբ): ՄԱԿ-ի Կանոնադրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մարտ 2-ից (Գլխավոր ասամբլեայի 46/227 բանաձև):

[16] Տեքստը տե՛ս http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf կայքում (07.04.2014թ. դրությամբ): Հիշարժան է նախաբանի «*...կարևոր է **իրավական պետության** կողմից մարդու իրավունքների պաշտպանությունը...*» դրույթը:

ղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը[17], 1966 թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը[18] և այլն:

Իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրումը քաղաքակրթական միավորի՝ Եվրոպական տարածաշրջանի իրավական մշակույթում հեռահար և որոշիչ ազդեցություն ունի. այսպես՝ Եվրոպայի խորհրդի 1949 թ. կանոնադրություն[19], ԵԱՀԿ գործունեության համար հիմնարար նշանակություն ունեցող 1975 թ. Հելսինկյան ակտը[20], 1950 թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (Եվրոպական կոնվենցիա)[21] և այլն[22]:

Հատուկ իրավունքի գերակայության սկզբունքի վերաբերյալ վերջին տասնամյակում բազմաթիվ պաշտոնական և գիտական, միջազգային և տարածաշրջանային համաժողովներ և այլ միջոցառումներ են անցկացվել[23], ընդունվել են բանաձևեր, որոշումներ և այլ

---

[17] ՀՀՊՏ 1997.12.25/29: Դաշնագիրը ՀՀ համար ուժի մեջ է մտել 1993 թվականի սեպտեմբերի 23-ից:

[18] Դաշնագիրը ՀՀ համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 13-ից:

[19] Դաշնագիրը ՀՀ համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 13-ից:

[20] Հելսինկյան եզրափակիչ ակտի տեքստը տե՛ս http://www.un.am/res/Library/DPI%20Publications%202012/UNDPI_International%20organizations,%20manual.pdf (հայ.) և http://www.osce.org/ru/mc/39505?download=true (ռուս.) կայքերում (07.04.2014 թ. դրությամբ): Արժանահիշատակ են Դեկալոգը՝ տասը սկզբունքները:

[21] Տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870 կայքում:

[22] Ունենալով հումանիտար և իրավական հսկայական ներուժ՝ իրավունքի գերակայության սկզբունքի հիմնատարրերը սահմանվում են նաև նախատեսվող (դեռևս ամբողջ ծավալով չգործող) միջազգային փաստաթղթերում՝ Եվրոպական միացյալ Սահմանադրություն (տեքստը տե՛ս http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=OJ:C:2004:310:FULL&from=FR (ֆրանս.) և http://eur-lex.europa.eu/legal-content/FR/TXT/PDF/?uri=OJ:C:2004:310:FULL&from=EN (անգլ.) կայքերում 07.09.2014 թ. դրությամբ), Հիմնարար իրավունքների Եվրամիության խարտիա (տեքստը տե՛ս http://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf (անգլ.) և http://www.europarl.europa.eu/charter/default_fr.htm (ֆրանս.) կայքերում 07.04.2014 թ. դրությամբ), Փարիզյան խարտիա Նոր Եվրոպայի համար (տեքստը տե՛ս http://www.osce.org/hy/mc/78640?download=true (հայ.) և http://www.osce.org/fr/mc/39517?download=true (ֆրանս.) կայքերում 07.04.2014 թ. դրությամբ):

[23] Հիշարժան են, մասնավորապես, հետևյալ միջոցառումներն ու փաստաթղթերը. «Ազգային և միջազգային մակարդակներում իրավունքի գերակայության մասին» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակի հանդիպման հռչակագիր (տեքստը տե՛ս http://www.un.org/ga/search/viehw_doc.asp?symbol=A/67/L.1&referer=/english/

փաստաթղթեր, որպես մասնագիտացված մարմին ստեղծվել է Վենետիկի հանձնաժողովը:

Ինչպես վկայում է վերոհիշյալ փաստաթղթերի ուսումնասիրությունը, իրավունքի գերակայության սկզբունքն այժմ գրեթե բոլոր զարգացած և զարգացող պետություններում, ողջ իրավական (սահմանադրական) մշակույթում (միջազգային և ներպետական իրավական ակտեր, դոկտրինալ և նորմատիվ տեքստեր, կառույցներ և կառուցակարգեր) դարձել է իրավիճակի նյարդը, բաբախող կետը, հիմնահարցը:

&Lang=R (ռուս.) և http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/67/L.1&referer=/english/&Lang=F (ֆրանս.) կայքերում 10.09.2014թ. դրությամբ), «Իրավունքի գերակայության սկզբունքի» մասին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1594(2007) բանաձև (տեքստը տե՛ս http://assembly.coe.int/main.asp?Link=/documents/adoptedtext/ta07/eres1594.htm (անգլ.) կայքում 07.09.2014 թ. դրությամբ), Եվրախորհրդի նախարարների կոմիտեի խորհրդաժողովի /Լոնդոն, 2012 մարտի 2/ «Իրավունքի գերակայությունը՝ որպես գործնական հայեցակարգ» (տեքստը տե՛ս http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2013)016-e (անգլ.), http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2012)001syn-e (անգլ.), http://hub.coe.int/rule-of-law-conference (անգլ.) կայքերում 07.09.2014թ. դրությամբ), Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի մոտեցումները (տեքստը տե՛ս The Council of Europe and the Rule of Law - An Overview CM(2008)170, 21 նոյեմբերի 2008թ. https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1374477&Site=CM (անգլ.) կայքում (07.09.2014թ. դրությամբ), ինչպես նաև քաղաքական ուղերձը CM(2003)87 final 24 June 2003 http://www.coe.int/t/dgap/democracy/activities/ggis/public_participation_internet_governance/85mess_pol_un-rusaug03_ru.asp?toPrint=yes& (ռուս.) կայքում (07.09.2014թ. դրությամբ), իրավունքի գերակայության ոլորտում խարտիա քաղաքացիական/ժողովրդավարական հասարակայնության և մարդու իրավունքների կրթության և դաստիարակության վերաբերյալ CM/Rec(2010)7 հանձնարարական՝ հաստատված ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից 2010 մայիսի 11-ին (տեքստը տե՛ս http://www.coe.int/t/dg4/education/edc/Source/Charter/Charter_brochure_RU.pdf (ռուս.), http://www.coe.int/t/dg4/education/edc/Source/Charter/Charter_brochure_en.pdf (անգլ.), http://www.coe.int/t/dg4/education/edc/Source/Charter/Charter_brochure_fr.pdf (ֆրանս.), կայքերում 07.09.2014թ. դրությամբ), Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանակներում 2013թ. հուլիսի 3-5-ը Երևանում հրավիրված «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և իշխանությունների հայեցողության սահմանները Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում» թեմայով համաեվրոպական խորհրդաժողով (նյութերը տե՛ս (Հուշագիր, http://concourt.am/armenian/news/index2013.htm (Հուշագրի տեքստ) և http://www.concourt.am/armenian/almanakh/almanac2013/almanac2013.pdf (զեկույցներ) կայքերում 07.09.2014թ. դրությամբ):

2. Հայերեն աղբյուրների՝ պատմաիրավական գրականության ուսումնասիրությունը վկայում է, «…*մեր պատմության յուրաքանչյուր էջ… վերահաստատումն է այն իրողության, օրենքն ու իրավունքի ճանաչումը հայ ինքնության որակների պահպանության գործում որոշիչ դեր են ունեցել: Դրա վկայությունն են, մասնավորապես, Սուրբ Գրիգորի կանոնները, Աշտիշատի, Շահապիվանի, Աղվենքի, Դվինի, Սիսի և բազմաթիվ այլ աշխարհիկ եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնական սահմանադրությունները, Հովհան Օձնեցու Հայոց կանոնագիրքը, համաշխարհային հնչեղություն ստացած մեր դատաստանագրքերը*»[24]:

Հայ իրավական իրականության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի (ժամանակակից ընկալմամբ) հայեցակարգային դրույթներ (տարրեր) առկա են եղել 18-րդ դարում Շահամիրյանների կողմից մշակված սահմանադրության նախագծում՝ «Որոգայթ փառաց»-ում[25]: Ըստ որում՝ հատկանշական է հենց փաստաթղթի անվանումը ստուգաբանության և արժեբանության ենթատեքստում. «Որոգայթ փառաց», ինչը կարևորվում է «սահմանադրություն» հասկացության արժեքաբանական և իմաստաբանական զուգահեռներում[26]:

Հայաստանի երեք հանրապետությունների՝ որպես պետական կազմավորումների սահմանադրական կյանքի պատմությունը նույնպես արտահայտել են տվյալ ժամանակահատվածի (իրավական ի-

---

[24] Հայերեն գրավոր աղբյուրներում իրավունքի ընկալման և իրավական մտքի դրսևորումների մասին առավել մանրամասն տե՛ս **Հարությունյան Գ.,** Իրավունքի ընկալման հայկական այբուբենը և ժամանակի մարտահրավերները (զեկույց հայ իրավաբանների միջազգային համաժողովում), Երևան, 2009, էջ 2-3 (ըստ http://concourt.am/armenian/structure/president/articles/yerevan_sep_2009_am.pdf կայքի 07.04.2014 թ. դրությամբ):

[25] Տեքստը տե՛ս http://www.digilib.am/digilib/?menu=5&wrk=146&captn=2055&wrpg=0&aupg=0 կայքում (07.04.2014թ. դրությամբ):

[26] «Որոգայթ փառաց». *այն կոչված էր երաշխավորելու ազատությունը պահպանելու հնարավորություն և ստեղծելու անճոռոպրելի որոգայթ բոլոր վատթար մարդկանց համար, որ հարկադրված լինեն մտնելու օգտաշատ գործողության լծի տակ*: Սահմանադրական իրավունքի ֆրանսիացի մասնագետ Դոմինիկ Ռուսոն այն գնահատում է որպես «իրավական մի ամբողջ տեսություն» (մեջբերումները՝ ըստ Հարությունյան Գ., Իրավունքի ընկալման հայկական այբուբենը և ժամանակի մարտահրավերները (զեկույց հայ իրավաբանների միջազգային համաժողովում), Երևան, 2009, էջ 10 (ըստ http://concourt.am/armenian/structure/president/articles/yerevan_sep_2009_am.pdf կայքի 07.04.2014 թ. դրությամբ):

բականության) սահմանադրագիտական, արժեբանական, տեքստային, ընթացակարգային, կառուցակարգային իրողությունները, ինչպես նաև կրել սոցիալական մշակույթի բազմաթիվ գործոնների ազդեցությունը: Հայկական պետականության վերականգնման և անկախության ժամանակահատվածները 20-րդ դարասկզբին և դարավերջին նոր մարտահրավերներ էին նաև հանրային կյանքի իրավական կանոնակարգման մոդելի ընտրության և կիրառման առումով[27]:

Հայաստանի անկախության հռչակագրի[28] ընդունումը հանրային կյանքում (սահմանադրագիտական և քաղաքագիտական չափում-

---

[27] Հայաստանի Առաջին Հանրապետության պետահիրավական կյանքի (հիմնախնդիրների) մասին առավել մանրամասն տե՛ս **Վաղարշյան Ա.,** Հայաստանի Առաջին Հանրապետության պետական իշխանության համակարգը (1918-1920թթ.), Եր., 2013, ատենախոսության սեղմագիր: **Հակոբյան Հ.,** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Տիգրան Մեծ», 2007, 145-154 էջ:
Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակման առաջին իսկ տարիներից իրականացված իրավագիտական (սահմանադրագիտական) որոնումները (այդ թվում՝ համեմատական ուսումնասիրություններն ու անդրադարձները) վկայում են խնդրո առարկայի հիմնարար բնույթի և այժմեականության մասին. տե՛ս, օրինակ, **Այվազյան Ն.,** Իրավական պետության հորիզոններում, ԵՊՀ հրատ., Եր., 1992; **Խաչատրյան Հ.,** Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ, Եր., 1997, **Նազարյան Հ.,** Ամերիկայի Միացյալ Նահանգների դատական համակարգը /պատ. խմբ.՝ Հ. Խաչատրյան.- Եր.: Նժար, 1997; **Հարությունյան Գ.,** Սահմանադրական վերահսկողություն: Համեմատական վերլուծություն /խմբ.՝ Հ. Խաչատրյան.- Եր.: Նժար, 1997; **Պողոսյան Վ., Միքումյան Կ.,** Գաղափարախոսությունը և սահմանադրությունը. նկատառումներ և խնդիրներ /խմբ.՝ Գ. Հարությունյան.- Եր.: Նոյյան Տապան, 1999, և այլն:

[28] Ընդունվել է 23.08.1990 թ (ՀՀ ԳԽՏ 1990/16): Հռչակագիրը գործող իրավական մանիֆեստ է և իրավամբ համարվում է ներկայիս սահմանադրության բաղկացուցիչ մասը՝ հանդիսանալով իմացաբանական ու մեթոդաբանական առումով ՀՀ իրավական համակարգի (այդ թվում՝ սահմանադրական օրենսդրության) սկզբնաղբյուրը. այսպես՝ Հռչակագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ *սույն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար:*
Հարկ է նշել, որ Հռչակագրին և անկախացման ժամանակաշրջանի ոգուն համապատասխան՝ 25.09.1991 թ. ընդունված «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը (գործել է մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը. պաշտոնական տեքստը՝ տե՛ս ԳԽՏ1991/18, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=2 կայքում) նույնպես շարունակում է իրավունքի գերակայության (իրավական պետության) սկզբունքի ավանդույթները (իրավահավասարություն, մարդու իրավունքների պաշտպանության ապահովում և այլն):

ներ) նշանավորեց արժեքաբանական և մեթոդաբանական նոր ուղեցույց. շարունակելով հայ իրավագիտական մտքի ավանդույթները և համամարդկային արժեքներին հավատարիմ՝ Հոչակագիրն առաջին անգամ անկախ պետականության պայմաններում ձևակերպեց հիմնարար դրույթներ, որոնք ելակետային նշանակություն ունեն նաև իրավունքի գերակայության սկզբունքի հիմնատարրերի ամրագրման և իրացման ներուժի ձևավորման տեսանկյունից:

1995 թվականի Սահմանադրության[29] ընդունմամբ տրամաբանական ավարտին հասավ սահմանադրական կանոնակարգման մոդելի ընտրության և իրավական պետության նախագծումը[30]:

ՀՀ իրավական համակարգում (նորմատիվ տեքստեր և իրավակիրառական գործընթաց) իրավունքի գերակայության սկզբունքի իրացման աստիճանը, բնույթը, (իրավունքի գոյաբանությունը, իմացաբանությունը, արժեբանությունը) անմիջականորեն փոխառնչվում են նաև գիտական հետազոտությունների բովանդակության և խորության, դեկտրինալ իմաստավորման հիմնահարցերին:

---

[29] Տեքստը (1995թ. խմբագրությամբ) տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1 կայքում: Իրավունքի գերակայության սկզբունքի դրսևորման (ձևակերպման) տեսանկյունից հատուկ հիշատակման է արժանի 6-րդ հոդվածի առաջին մասը («*Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքի գերակայությունը*»), որը, սակայն, հետագայում՝ 2005 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում սահմանադրական տեքստից հանվեց:

[30] Հայրենական իրավագիտական միտքը որոնել և շարունակում է որոնել Իրավունքի գերակայության սկզբունքի թե՛ տեսական-իրավափիլիսոփայական ընկալումը, խորությունները, շերտերն ու առանձին շեշտադրումները, թե՛ սահմանադրական կոնկրետ հարցադրումների լուծումները: Տե՛ս **Ասատրյան Ա.,** իրավունքի գերակայության սկզբունքը արդի իրավական համակարգի խորապատկերում, Հայրապետ հրատ, Եր., 2013; **Քոչարյան Ն.,** Մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում (մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման համատեքստում), ատենախոսության սեղմագիր, Եր., 2014; **Թովմասյան Մ.,** Իրավակարգը իրավական պետությունում (Հայաստանի Հանրապետության նյութերի հիման վրա), սեղմագիր, թեկն. ատենախոսության, Եր., 2001; Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, Եր., Իրավունք, 2010; **Հարությունյան Գ.,** Իրավունք գերակայության սահմանադրական երաշխիքները, «Նժար» հրատ., Եր., 2003; **Հարությունյան Գ.,** Սահմանադրականության գումարելիները՝ իրավունքի գերակայություն, կայուն զարգացում, «Օրենք և իրականություն», 2011, թիվ 3, էջ 1-5; **Հարությունյան Գ.,** Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, «Նժար» հրատ., Եր., 2005 և նշված հեղինակի՝ այս թեմայով կատարված բազմաթիվ հետազոտություններ:

Ձևակերպվելով (նորմատիվ-տեքստային առումով) և առաջին անգամ նյութականանալով հայ իրավական իրականությունում՝ իրավունքի (օրենքի) գերակայության սկզբունքը ոչ միայն չի դադարել գտնվել հայ իրավագետների և կառավարող ուժերի[31] ուշադրության կենտրոնում և չի կորցրել արդիականությունն ու ուսումնասիրման ներուժը (շերտերն ու չափումները), այլև ընկած լինելով նախանշվող սահմանադրական փոփոխությունների մոտիվացիոն և թելեոլոգիական փաստարկների հիմքում, ՀՀ-ում նախանշում է նոր փուլ հայ սահմանադրական զարգացման գործընթացում՝ ընդհանրապես, և իրավունքի գերակայության սկզբունքի իրացման հարցում՝ մասնավորապես[32]:

Այսպիսով՝ դիտարկելով իրավունքի գերակայության սկզբունքի զարգացման պատմությունը՝ նկատում ենք պետահիրավական կյան-

---

[31] Այս տեսանկյունից արժանահիշատակ են նախագահական ընտրություններում թեկնածուների նախընտրական ծրագրերը: Օրինակ՝ նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական ծրագիրը, «Հայք» օրաթերթ 31 օգոստոսի 1996 թվական; Նախագահ Ռ. Քոչարյանի ելույթը 2003 թվականի երդմնակալության արարողության ժամանակ (տե՛ս http://2rd.am/hy/HH-Nakhagah-Robert-Kocharyani-eluyty-erdmnakalutyan-araroghutyan-jamanak կայքում 10.09.2014 թ. դրությամբ); նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի 2008 (տե՛ս http://www.president.am/u_files/ file/docs/program_arm.pdf կայքում 10.09.2014 թ. դրությամբ) և 2013 (տե՛ս http://www.president.am/u_files/file/docs/election-programm-2013-hy.pdf կայքում 10.09.2014 թ. դրությամբ) թվականների նախընտրական ծրագրերը:

[32] Որպես սահմանադրական փոփոխությունների գործընթացի սկիզբ՝ ՀՀ նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի հրամանագրի (տե՛ս http://www.president.am/hy/decrees/item/947/ պաշտոնական կայքում) հիման վրա ձևավորվել է մասնագիտական հանձնաժողովը: Սահմանադրական փոփոխությունների (բարեփոխումների) հայեցակարգը (2014 թվականի մարտին հրապարակվեց նախագիծը) (տե՛ս http://www.justice.am/storage/uploads/A_00.pdf պաշտոնական կայքում 10.09.2014 թ. դրությամբ) իսկ 2014 թվականի հոկտեմբերին արդեն հայեցակարգը (տե՛ս http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan_barepokhumner_verjnakan.pdf պաշտոնական կայքում 10.09.2014 թ. դրությամբ) մշակող հանձնաժողովը, ելնելով իր առջև դրված խնդիրներից, առաջարկում է լուծումներ՝ իրավունքի գերակայության սկզբունքի իրացման սահմանադրաիրավական անհրաժեշտ ու բավարար նախադրյալների ստեղծում:

Առաջիկա ամիսները, անշուշտ այս առումով հսկայական հնարավորություններ են ստեղծում թե՛ կուտակված էմպիրիկ նյութի ուսումնասիրման, թե՛ Հայեցակարգի լուծումների և գիտական մտքի համադրմամբ սահմանադրական, ընթացիկ օրենսդրական և իրավակիրառական պրակտիկայի իմաստավորման, թե՛ սահմանադրական մշակույթին (իրողություններին) հասարակության (համապատասխան խմբեր և շերտեր) ներգրավվածության և տեղեկացվածության ապահովման տեսանկյունից:

քի զարգացման փուլերում այդ սկզբունքի առանձին տարրերի սաղմնավորումը, որոնք հանդիսացել են իրավունքի գերակայության արդի հայեցակարգի ձևավորման նախադրյալները և արտացոլում են պատմական դարաշրջանների փոխազդեցություններն ու շեշտադրումները՝ արձանագրելով գիտական մտքի որոնումները, վերհանելով հանրային չափումներում առարկայացող փորձը, ամփոփելով իրավական մշակույթի խորքերն ու շերտերը:

Իրավունքի գերակայության սկզբունքի արդի հայեցակարգը՝ որպես հարցադրումների և լուծումների համապարփակ դոկտրինալ ձեռնարկում (փորձ), այդուհանդերձ, ոչ միայն չի սպառել ժամանակակից պետաիրավական կյանքի օրակարգը, այլև հանդիսանում է միաժամանակ հանգրվան և մեկնարկ՝ նորովի բացահայտելու իրավունքի գերակայության սկզբունքի որակներն ու դրսևորման հնարավորությունները, համապատասխան չափով կանխորոշում է իրավական իրականության նորմատիվ, գործնական, դոկտրինալ հարթությունների հիմքը, բովանդակությունն ու ոճը, պայմանավորում է իրավունքի իրացման ողջ գործընթացի (իրավական կարգավորման կառուցակարգի) մասշտաբը, մեթոդաբանությունն ու տեխնոլոգիան:

Тигран Аветисян
Соискатель кафедры конституционного права ЕГУ

ИСТОРИКО-ПРАВОВЫЕ ПРЕДПОСЫЛКИ ПРИНЦИПА ВЕРХОВЕНСТВА ПРАВА

Современная концепция принципа верховенства права сформирована на основании целого ряда исторических, социальных, доктринальных предпосылок.

В статье рассматривается история развития (эволюция) принципа верховенства права, в частности, исследуется на различных стадиях развития государственно-правовой жизни зарождение различных элементов этого принципа, которые явились предпосылками (факторами) формирования современной концепции верховенства права.

Таким образом, в статье обобщен, по нашему мнению, анализ исторически переломных документов, доктринальных подходов (начиная с античного периода по сегодняшний день), которые

являются основой современной концепции, выявляя опыт, материализующийся в общественных измерениях, обобщая глубинные пласты правовой культуры.

Одновременно в статье указывается, что современная концепция верховенства права (доклад Венецианской комиссии), в данной инициативе (попытке), объединяющей исторически сформированные подходы (опыт), в свою очередь, является и пристанищем, и отправной точкой для выявления качеств и возможностей проявления принципа верховенства права также в современной эпохе, в особенности, учитывая его потенциал в контексте конституционных реформ в РА.

Tigran Avetisyan
Applicant of the YSU Chair of Constitutional Law

THE HISTORICAL-LEGAL BACKGROUND OF THE RULE OF LAW

The modern concept of the rule of law is formed, having in its base the historical, social, doctrinal background.

The article discusses the history of the development (evolution) of the rule of law, in particular, the emergency of such principle separate elements at different stages of development of the state and legal life, which were the prerequisites (factors) for the formation of the modern concept of the rule of law.

Thus, the article summarizes, in our opinion, the analysis of historical critical papers, doctrinal approaches (starting from the Ancient period to the present day), which provide the "heritage" of the modern concept and reflect the interaction and focus, by recording searches of scientific thought, raising materializing experience of the public dimensions, generalizing the depth and layers of legal culture.

Simultaneously, the article states that the modern concept of the rule of law (Venice Commission report), in the initiative (attempt), which unites the historically formed approaches (experience), in its turn, is also both a shelter, and the starting point for identifying new qualities and possibilities of the manifestation of the principle of the rule of law in the Modern Epoch, especially taking into consideration its potential in the context of constitutional reforms in the RA.

Բանալի բառեր՝ *իրավունքի գերակայություն, սահմանադրություն, իրավունքի գերակայության հայեցակարգ, իրավական պետություն, Վենետիկի հանձնաժողով, պատմաիրավական նախադրյալ, սահմանադրական իրավունք, միջազգային ակտեր, պատմական փաստաթղթեր, հռչակագիր, սահմանադրական բարեփոխումներ:*

Ключевые слова: *верховенство права, конституция, концепция верховенства права, правовое государство, Венецианская комиссия, историко-правовые предпосылки, конституционное право, международные акты, исторические документы, декларация, конституционные реформы.*

Key words: *rule of law, constitution, concept of the rule of law, the Venice Commission, the historical and legal background, constitutional law, international acts, historical documents, declaration, constitutional reform.*